ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՓԻՆԵ ՉԱՆԹԻԿՅԱՆ

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻՆ՝ ԱՆԱՊԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Քրիստոնեական եկեղեցին առաջին երեք դարերում վարում էր ներփակ կյանք, քանի որ հալածանքների սպառնալիքը դեռեւս չէր վերացել. Դ. դարը նոր, հակասական եւ պայքարի ժամանակաշրջան էր: Եկեղեցին չհրաժարվեց իր վարդապետությունից, բարոյական կանոններից, այլ ստանձնեց շատ կարեւոր եւ դժվարին մի իրագործում՝ քրիստոնեական վարդապետությունն ու բարոյագիտությունը ներմուծել անտիկ աշխարհ, հեթանոսական մշակույթը փոխարինել նոր մշակութային արժեհամակարգով: Եկեղեցին ստիպված էր պայքարել նաեւ վաղ քրիստոնեական աղանդների դեմ, պաշտպանել եւ ամրագրել սեփական դավանաբանական եւ ծիսապաշտամունքային սկզբունքները, կազմակերպված բնույթ հաղորդել անապատականությանը: Ահա այս բարդ ժամանակաշրջանում էր, որ իր գործունեությունը ծավալեց Եկեղեցու նշանավոր հայր եւ մեծ ասպվածաբան Ս. Բարսեղ Կեսարացին:

Ս. Բարսեղ Մեծը (329-379 թթ.) ծնվել է Կեսարիայում: Նրա ընտանիքը, խուսափելով Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից, յոթ տարի շարունակ թաքնվում է Պոնտոսի անտառներում: Ս. Բարսեղ Կեսարացու հայրը Նեոկեսարիայի հայտնի հռետորներից էր եւ որդու մեջ հետաքրքրություն էր սերմանում մշակույթի, արվեստի նկատմամբ: Նրա դաստիարակությամբ զբաղվում են նաեւ տատն ու մայրը, որոնք կրթված եւ ջերմեռանդ քրիստոնյաներ էին[1]: Կապադովկյան Կեսարիայի նշանավոր դպրոցում յոթ տարի ուսանելուց հետո նա մեկնում է Կ. Պոլիս եւ ուսումը շարունակում հայտնի հռետոր Լիբիանոսի դպրոցում: Այնուհետեւ համակողմանի կրթություն է ստանում Աթենքի համալսարանում՝ ուսումնասիրելով փիլիսոփայություն, քերականություն, ճշգրիտ եւ բնական գիտություններ՝ աստղագիտություն, երկրաչափություն, բժշկություն: Այստեղ Ս. Բարսեղ Կեսարացին ստանում է հիմնավոր եւ խոր գիտելիքներ[2]: 354 թվականին վերադառնում է հայրենիք եւ մկրտվում: Որոշ ժամանակ անց՝ 358-ին նա ճանապարհորդում է Եգիպտոս, Սիրիա, Պաղեստին, այցելում նշանավոր ճգնավորներին՝ հաղորդակից դառնալով

1 Տեմ "Христианство", Москва, т. 1, 1993, էջ 339:

2 Տեմ **Святой Василий Великий**, *Духовные наставления*, Москва, 1998, էջ 7-8:

անապատական կյանքին: Անապատականների զուսպ կենցաղավարությունից, աղոթասիրությունից, հնազանդությունից եւ ժուժկալությունից այնքան է ոգեշնչվում, որ վերադառնալով Կեսարիա՝ իր ունեցվածքը բաժանում է չքավորներին եւ առանձնանում Իրիս գետի ափին գտնվող Անսիա վայրում (Պոնտոս)[3]: Շուտով այնտեղ է մեկնում նաեւ Գրիգոր Ասպվածաբանը. նրանք որոշում են մշակել կենովիալ-համակեցական վանականությանը վերաբերող կանոններ, կազմում են «Ծաղկաքաղ» (Philokalia) աշխատությունը, ուսումնասիրում Եկեղեցու հայրերի եւ ուսուցիչների ժառանգությունը: Որոշ տեղեկությունների համաձայն՝ Ս. Բարսեղ Կեսարացին մինչեւ Հուլիանոս կայսեր իշխանության ավարտը մնում է անապատում[4]:

Կոստանցիանոս կայսեր օրոք (337-361 թթ.) տարածվում եւ պաշտպանություն է գտնում Արիոսի վարդապետությունը: Եկեղեցին Ս. Բարսեղ Կեսարացուն եւ Գրիգոր Նազիազանցուն հոգեւոր ծառայության է կանչում: Ս. Բարսեղ Մեծը վերադառնում է Կեսարիա եւ 362 թ. ձեռնադրվում սարկավագ: Գրիգոր Ասպվածաբանը վկայում է. «... իմաստության եւ սրբության համար բոլորը խռնարհվում էին Ս. Բարսեղի առջեւ: Ուստի, Եւսեբիոսը (Կեսարիայի եպիսկոպոսը) մարդկային թուլակամության պատճառով նախանձով է լցվում եւ անբարեհաճ վերաբերմունք ցուցաբերում նրա նկատմամբ»[5]: Հոգեւորականները բացահայտ կերպով ցույց են տալիս իրենց համակրանքը եւ պաշտպանում Ս. Բարսեղ Կեսարացուն. վերջինս հեռանում է անապատ՝ խուսափելով հոգեւոր պառակտումից:

Արիոսականության կողմնակից եւ վճռական պաշտպան Վալենտիանոս կայսեր գահակալության տարիներին Եկեղեցու համար սկսվում է ծանր եւ դժվարին ժամանակաշրջան: Եւսեբիոսի խնդրանքով 364 թ. Ս. Բարսեղ Մեծը վերադառնում է Կեսարիա, եւ այս շրջանից սկսվում է նրա հովվական ծառայությունը: Գ. Ֆլորովսկին, վկայակոչելով եկեղեցական հայրերի որոշ հիշատակություններ, նշում է, որ նա հեւտաքրքիր խառնվածք ուներ, սիրված եւ բարեխնամ հովիվ էր[6]:

Եւսեբիոսի մահից հետո՝ 370 թ., Կեսարիայի եպիսկոպոս է դառնում Ս. Բարսեղ Մեծը: Այս շրջանում կայսերական իշխանությունն ամեն կերպ աջակցում էր արիոսականներին: Դիմադարձ կանգնելով հերետիկոսներին՝ Ս. Բարսեղ Մեծը, որպես ուղղափառության անկեղծ պաշտպան, «արժանացավ» կայսեր հակակրանքին: Վերջինս «համառ» եւ «անհնազանդ» եպիսկոպոսներին արտաքսում է: Կայսեր հրահանգով ոստիկանապետ (պրեֆեկտ) Մոդեստը, գալով Ս. Բարսեղ Կեսարացու մոտ, սպառնում է աքսորել, հալածանքների ենթարկել եւ նույնիսկ մահվան դատապարտել: Սակայն վերջինս անվրդով պատասխանում է. «Ունեցվածքը չի կորցնում նա, որ ոչինչ չունի, բացի հին ու մաշված կոշիկներից եւ սակավաթիվ գրքերից... Աքսոր չկա ինձ համար, քանզի ես կապված չեմ հողին: Ավելի ճիշտ՝ ամենուր ես պանդուխտ եմ, օտարական եւ անցորդ

3 Տես **Burton-Christie, Douglas**, *The World in the Desert. Scripture and the Quest for Holiness in Early Christian Monasticism*, New York, 1993, էջ 54:

4 Տես **Г. Флоровский**, *Восточние отцы IV века*, М., 2003, էջ 100:

5 Անդ, էջ 101-102:

6 Տես անդ:

(հմմտ. Սաղմ. ԼԸ. 13): Ինչ կարող են ինձ անել հալածանքները... ես այնքան փոքր եմ, որ միայն առաջին հարվածը կզգամ: Իսկ մահապատիժն ինձ համար բարեգործություն է. այն ինձ կտանի Աստծու մոտ, ում համար ապրում, չարչարվում եմ, ում վաղուց եմ ես ձգտում»[7]: Իշխանավորն ապշում է այս պատասխանից եւ հեռանում: Նման վճռականություն Ս. Բարսեղ Մեծը ցուցաբերում է նաեւ կայսեր ներկայությամբ եւ իր վարքով այնքան մեծ տպավորություն է թողնում Վալենտիանոսի վրա, որ վերջինս հրաժարվում է իր վճիռն իրագործելուց: Արիոսականների դեմ մղվող հերետոդական պայքարն ավելի է բարձրացնում Ս. Բարսեղ Կեսարացու հեղինակությունը:

Վալենտիանոս կայսեր օրոք Արեւելքի ուղղափառ եպիսկոպոսներից միայն Ս. Բարսեղ Կեսարացուն է հաջողվում պահպանել հոգեւոր իշխանությունը եւ աքսորի չդատապարտվել. նա նույնիսկ կարողանում է համախմբել հակառակորդ եւ կարգալույծ եղած եպիսկոպոսներին: Նրան ցավ եւ հիասթափություն էին պատճառում դավանաբանական վիճաբանություններն ու պառակտումները, որոնց մասին բազմիցս նշում է իր նամակներում եւ աշխատություններում: Ս. Բարսեղի կյանքի մայրամուտը «երկարատեւ հիվանդության» շրջան էր, սակայն ոչ թե մարմնական, այլ հոգեկան անհանգստության եւ տառապանքի: Այս մասին գրում է ընկերոջը՝ Թեսաղոնիկեի Ասքոլիոս եպիսկոպոսին. «Սերը մարել է... մեր հայրերի վարդապետությունը՝ արժեզրկվել, հավատքի բազում նավաբեկություններ են տեղի ունեցել: Բարեպաշտների շուրթերը լռել են...»[8]:

Բազում տարիների ճգնակեցությունը, վարչական գործերով ծանրաբեռնված լինելը քայքայել էին Ս. Բարսեղ Մեծի փոքր առողջությունը, եւ 379 թ. նա վախճանվում է. Եկեղեցին նրա վաղաժամ մահով մեծ կորուստ է կրում: Գրիգոր Նազիանզացու վկայությամբ՝ Ս. Բարսեղի մահվան օրը հրաշք է տեղի ունեցել. Հովսեփ անունով մի հրեա, որը նշանավոր բժիշկ էր, այցելում է նրան եւ հայտնում, որ մինչ մայրամուտ կմահանա. «Եթե դու մինչեւ հաջորդ օրը կենդանի մնաս,- ասում է Հովսեփը,- ես կմկրտվեմ ձեր Աստծո հավատքով, քանզի միայն Նա իր աստվածային զորությամբ կարող է քո կյանքը երկարացնել»: Հովսեփը հեռանում է, իսկ մահվան մահճում պառկած Ս. Բարսեղ Կեսարացին, խաչակնքելով սառչող ձեռքերը, աղոթում է Հիսուս Քրիստոսին եւ խնդրում մի քանի ժամ ես իրեն կյանք եւ շնչառություն պարգեւել, որպեսզի Հովսեփը դառնա փրկագործության եւ բարեպաշտության մասնակից: Հաջորդ օրը Ս. Բարսեղին կենդանի տեսնելով՝ Հովսեփը ծնկի է գալիս նրա առջեւ, ընդունում քրիստոնեական դավանանքը եւ ցանկանում մկրտվել: Ս. Բարսեղ Մեծը, կարծես գերբնական ուժով, վեր է կենում անկողնուց, գնում եկեղեցի, մկրտում հրեային եւ նրա ընտանիքի անդամներին. նույն օրը վախճանվում է[9]:

Ս. Բարսեղ Կեսարացու եկեղեցական գործունեությունը, անապատական կյանքը, արիոսականության դեմ մղած համառ պայքարն ու հոգեւոր ծառայությունն իրենց ազդեցությունն են թողել նրա մատենագրության վրա: Նրանից մեզ հասել են հոգեւոր-աստվածաբանական բազմաթիվ արժեքավոր աշխատություններ, մեկնություններ, դավա-

7 **Святой Василий Великий,** с. 10-12.

8 **Святитель Василий Великий**, *Беседы на Шестоднев*, М., 1999, с. 23.

9 Տես "Житие Василия Великого", Москва, 1895, էջ 78:

նաբանական, ծիսագիտական գործեր: Դրանցից է «Վեցօրեայք»-ը, որն ընդգրկում է Ծննդոց գրքի առաջին գլխի (Ա. 1-26) մասին ինը զրույցներ: Վերջիններս արժեքավոր են ոչ միայն իրենց աստվածաբանական քննարկումներով, այլ նաև փիլիսոփայական եւ գիտական եզրահանգումներով: Գրիգոր Աստվածաբանը Ս. Բարսեղ Կեսարացու այս աշխատության մասին գրում է. «Երբ ես ձեռքս եմ վերցնում եւ կարդում նրա «Վեցօրեայք»-ը, հաղորդակցվում եմ Արարչի հետ»[10]: Բարսեղ Մեծը գրել է նաեւ Սաղմոսների (Ա., Է., ԺԴ., ԻԸ., ԺԹ., ԼԲ., ԼԳ.) եւ Եսայիի մարգարեության (Ա. 1-16) մեկնություններ: Դավանաբանական գրվածքներից են արիոսական Եւնոմիոսի դեմ գրված երեք ճառերը, որոնցում ժխտել է ենթակարգության (սուբորդինացիոն) գաղափարները եւ ապացուցել Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու լիակատար հավասարությունը[11]: Աստվածաբանական կարեւոր նշանակություն ունի «Սուրբ Հոգու մասին» ճառը (375 թ.), որտեղ նա պաշտպանել է Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու համագոյությունը: Ս. Բարսեղ Կեսարացու դավանաբանական երկերից են նաեւ՝ «Սուրբ Հոգու աստվածության մասին՝ ընդդեմ Սաբելիոսի եւ անոմեականների», «Աստծո Որդու աստվածության մասին», «Հավատքի կամ Սուրբ Երրորդության մասին», «Այն մասին, որ Աստված չարի պատճառ չէ» եւ այլն: Մատենագրական ժառանգության մեծ մասն ունի գործնական բնույթ՝ դավանաբանական աշխատություններ, վանական կանոններ, հակաճառություններ, քարոզներ, ներբողներ, զրույցներ, նամակներ:

Ս. Բարսեղ Կեսարացին, որպես արեւելյան վանականության կանոնադիր, հանգամանորեն զբաղվել է նոր տեսակի անապատական կենցաղավարության ձեւավորմամբ եւ հաստատմամբ: Մեծ տարածում են գտել նրա կանոնները, ճգնակեցությանը նվիրված գրվածքները, քարոզներն ու զրույցները: Անապատական կանոններն ամփոփվել են մեկ գրքում, որը ժամանակի ընթացքում խմբագրվել է: Գրիգոր Աստվածաբանը վկայում է, որ «Նոմոկանոնի» հեղինակը Ս. Բարսեղն է: Այս աշխատությունը հայտնի է երկու խմբագրությամբ՝ համառոտ եւ ընդարձակ[12]: Առաջինը կազմվել է Պոնտոսում առանձնանալու տարիներին եւ ներառում է 45 կանոն կամ համառոտ քննարկում: Երկրորդը գրվել է Կեսարիայում եւ ընդգրկում է 313 կանոն, որոնց մեջ կան նաեւ գործնական հրահանգներ, պատգամներ: Հայտնի է նաեւ «Բարոյախրատական կանոնների» ժողովածուն, որտեղ ամփոփված է 80 կանոն՝ ուղղված անապատականներին, քրիստոնյաներին եւ հոգեւոր հովիվներին: Նա հեղինակել է հարց ու պատասխաններից բաղկացած վանական կանոնադրություններ, որոնք հայկական ձեռագրերում հայտնի են «Գիրք հարցողաց» կամ «Հարցմունք ճգնաւորացն, պատասխանի սրբոյ Բարսղի»: Այդ կանոնները մեծապես նպաստել են Արեւելքի եւ Արեւմուտքի վանական կյանքի կազմակերպմանը, դրանց են հետեւել Թեոդոր Ստուդիտը եւ Ս. Բենեդիկտոսը[13]:

Դ. դարում քրիստոնյա հասարակության ուշադրությունը գրավում էին անապա-

10 Անդ, էջ 64:
11 Տե՛ս "Творения древних отцов-подвижников", в пер. А. И. Сидорова, М., 1997, էջ 78:
12 Տե՛ս **E. F. Morison**, *St. Basil and his rule: a study in early monasticism*, London, 1912, էջ 137, 145:
13 Տե՛ս "Monks, Hermits and Ascetic Tradition ", ed. by W. J. Sheils, New York, 1985, էջ 58:

տականները, որոնք աչքի էին ընկնում բարեպաշտությամբ եւ մաքրակեցությամբ: Ս. Բարսեղ Կեսարացին Եգիպտոսում եւ Ասորիքում հանդիպում է վանականության երկու տեսակի՝ մենակեցության եւ համակեցության[14]: Նրա ըմբռմամբ, սակայն, լիակատար միայնությունը վտանգավոր է երկչոտների եւ թուլակամների համար. երկչոտները գրկվում են խելամտությունից, իսկ թուլակամները «հիվանդանում են» հոգեւոր զոռոզամտությամբ: Ավելին՝ մենակեցության միակ նպատակը սեփական փրկությանը հասնելն է, որը թույլ չի տալիս իրագործել «մերձավորի հանդեպ սիրո» ավետարանական պատվիրանը: Իսկ բազմամարդ անապատներում երբեմն սկսում են իշխել կենցաղային խնդիրներն ու հետաքրքրությունները, որոնք վանականներին շեղում են աղոթքից եւ հոգեւոր մաքրագործումից: Ս. Բարսեղ Մեծն առաջարկում էր անապատական կյանքի մի նոր ձեւ, որը ներառելով մենակեցության եւ համակեցության արժեքավոր տարրերը՝ զերծ կլիներ ծայրահեղությունից եւ անկատարությունից: Նրա հիմնած վանքերում հոգեւոր սրբագործումն ուղեկցվում էր այնպիսի աշխատանքներով, որոնք ամրապնդում էին ճգնավորների միասնականությունը, եղբայրասիրությունը: Ս. Բարսեղ Կեսարացին կինովիալ (հուն. koinos-ընդհանուր եւ bios-կյանք բառերից է) համակեցության ջատագովներից էր[15], չնայած գործնականորեն չէր բացառում նաեւ մենակեցությունը: Ըստ նրա՝ «կինովիալ»-ը վանական կյանքի առավել կատարյալ ձեւն է, որն ամրապնդում է քրիստոնեական եղբայրասիրությունը[16]: Ճգնակեցությունը առանձնանալու ձգտումն է՝ ոչ թե աշխարհի նկատմամբ ունեցած ատելության, այլ Աստծո հանդեպ տածած սիրո պատճառով, քանի որ աշխարհի ունայնության եւ խառնաշփոթի մեջ չենք կարող մաքրագործվել եւ մոտենալ Աստծուն: Սակայն Աստծո հանդեպ տածած սերը չպետք է տարանջատել մերձավորի սիրուց: Այդ պատճառով Ս. Բարսեղը մենակեցական ճգնավորությունը համարում էր անկատար, «սեփական փրկությունը փնտրող»[17]: Բացի այդ, մենակյացի հոգեւոր շնորհները անպտուղ են մնում, եւ միայնության մեջ հեշտությամբ են ծնվում հպարտությունն ու զոռոզամտությունը: Ս. Բարսեղ Մեծը նախապատվությունը տալիս է համակեցությանը, երբ անհատի՝ Ս. Հոգուց ստացած շնորհներին հաղորդակից են դառնում նաեւ մյուսները: «Վանական հաստատությունը Փրկչի մարմինն է, ուստի բնական ամբողջականությունը պահանջում է անդամների փոխհամաձայնություն եւ ենթակայություն մարմնին: Համակեցության մեջ ճգնավորը պետք է անցնի մաքրագործման իր ուղին, հոգեւոր ծառայությունը»[18],- գրում է Ս. Բարսեղ Կեսարացին: Ճգնակեցության մեջ կարեւորվում էր պահեցողությունը. պահքը արժեք չունի, եթե չի զուգակցվում մաքրագործումով, զղջումով, ապաշխարությամբ, ունայն փառքից եւ հպարտությունից հրաժարումով: Իրական պահեցողությունը մեղքերից եւ գայթակղությունից հրաժարվելն է, աշխարհիկ փափկակեցությունից օտարվելը, որը նաեւ հոգեւոր կյանքի սկիզբն է: Սակայն վանականները, «պահք» ասելով, հաճախ հասկանում են «սննդին չդիպչելը», որը

14 Տե՛ս “Христианство”, т.1, Москва, 1993, էջ 340:
15 Տե՛ս **Г. Флоровский,** *Восточне отцы IV века*, М., 2003, էջ 104-105:
16 Տե՛ս անդ, էջ 106:
17 Տե՛ս անդ, էջ 107-108:
18 Տե՛ս **Святой Василий Великий**, նշվ. աշխ., էջ 75-76:

հանգեցնում է «կյանքի բոնի ոչնչացման»[19]: Ճիշտ է, վանականը պետք է կարողանա իշխել սեփական ցանկություններին, որկրամոլությանը, սակայն սնունդի պահեցողությունը պետք է լինի ճգնավորի մարմնական ներուժի սահմաններում: Մարմինը պետք է առողջ պահել հոգուն ծառայելու համար. պետք է զգույշ լինել, որ ծայրահեղ պահեցողությունը չքայքայի մարմինը եւ չդարձնի ծույլ ու անկարող: Ճգնակեցությունից անբաժան է «հոգեւոր պահքը», որի պտուղներն են՝ համեստությունը, հեզությունը, եղբայրասիրությունը, գթասրտությունը, ճշմարտասիրությունը, ողորմածությունը: Ս. Բարսեղ Կեսարացու կանոնները վերաբերում են ոչ միայն սնունդի մեջ չափավորությանը, այլ նաեւ մարդու մեղանչական հակումներ ունեցող զգայարաններին: Վանականը պետք է կարողանա իշխել մարմնական ցանկություններին եւ կրքերին, զերծ մնա մեղքերից եւ չար գործերից, չտրվի գայթակղության: Հետեւելով աստվածաշնչյան պատվիրաններին՝ ճգնավորի առջեւ ուղի է նախանշվում դեպի հոգեւոր կյանք, մաքրագործում եւ փրկություն: Ս. Բարսեղ Կեսարացին գրում է. «...եթե մեկն ասում է, թե հավատում է Տիրոջը եւ հետեւում նրա խրատներին, սակայն չի ապրում Աստծո պատվիրաններով, ուրեմն դատապարտված է եւ չի կարող մուտք գործել Աստծո արքայություն»[20]: Այս պատգամն առավել ընդգծելու համար Ս. Բարսեղը մեջբերում է Պողոս առաքյալի խոսքերը. «Խոստանան գիտել զԱստուած, եւ գործովք իւրեանց ուրանան. պիղծ եւ անհաւանք եւ յամենայն գործս անպիտանք» (Տիտ. Ա. 16): Այս մասին է խոսում նաեւ Մեսիան. «Չի՞ կոչէք զիս Տէր, Տէր, եւ զոր ասեմն ոչ առնէք» (Ղուկ. Զ. 46): Աստծո պատվիրանները պետք է պահել հնազանդությամբ, խոնարհությամբ եւ սիրով:

Անապատականները մշտապես ենթարկվում են փորձությունների, գայթակղության, որոնց դիմակայելու համար պետք է նախապես պատրաստված լինել եւ հոգեւոր կամք ցուցաբերել. փորձություններից հանկարծակիի եկողները հեշտությամբ են գայթակղվում եւ ընկնում մեղքի որոգայթը[21]: Անհրաժեշտ է մշտապես աղոթել, քանզի աղոթքն է, որ կապ է ստեղծում Աստծո եւ հավատացյալի միջեւ, հզոր զենք դառնում չարի եւ փորձության դեմ: Ինչպես անհատը, ապրելով հասարակության մեջ, ենթարկվում է նրա ընկերային օրենքներին, նույնպես եւ ճգնավորը, ապրելով մենաստանում, պետք է ենթարկվի վանական կանոններին, իսկ դրանք պատվիրում են հրաժարվել աշխարհիկ հարստությունից, կենցաղավարությունից, մեղքերից, ցանկություններից, քանզի Աստծո Որդին ասել է. «Ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել»[22]: Վանականը պետք է ձգտի նմանվել Փրկչին եւ քրիստոնյա սրբերին, քանզի Աստծո Որդին պատվիրեց. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ. առէք լուծ իմ ձեզ, եւ ուսարուք յինէն՝ զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի»[23]:

Ս. Բարսեղ Կեսարացու քարոզներում եւ ճառերում կարեւորվում է նաեւ հավատքի

19 Տե՛ս անդ, էջ 77:
20 **Святой Василий Великий**, с. 247.
21 Տե՛ս **F. E. Robbins**, *The hexaemeral literature*, Chicago, 1912, էջ 94-97:
22 Մատթ. Զ. 24:
23 Մատթ. ԺԱ. 29:

ամրությունը, քանի որ ճգնակեցությունն առանց հավատքի կեղծավորություն է: Անապատականի յուրաքանչյուր խոսք եւ գործ պետք է հագեցված լինի սուրբգրային վկայություններով: Նա պետք է ողորմած, աղքատասեր լինի եւ կյանքի համար խիստ անհարաժեշտ կերակրից, հնացած եւ մաշված հագուստից բացի ոչինչ պետք է չունենա: Սակայն Ս. Բարսեղ Մեծը միեւնույն ժամանակ կարեւորում էր աշխատանքի դերը՝ «Զի արժանի է մշակն կերակրոյ իւրում»[24]: Վկայակոչում է նաեւ Պողոս առաքյալին. «Որ գողանայրն՝ մի՛ եւս գողասցի, ա՛յլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք զբարիս. զի բաական իցէ տալ ում պիտոյ իցէ»[25]: Վանական համալիրներում աղոթքն ու մաքրագործումը զուգակցվում էին այնպիսի աշխատանքներով, որոնք ամրապնդում էին հոգեւոր միասնությունը, չէին առաջացնում անհավասարություն եւ վանականներին չէին շեղում հիմնական նպատակից: Բացի հողագործությամբ եւ այլ աշխատանքներով զբաղվելը՝ յուրաքանչյուրի համար պարտադիր օրվա ընթացքում աղոթքի վեց ժամ էր սահմանվում[26]: Վանականների կերակուրը պետք է լիներ հասարակ եւ չափավոր՝ քաղցը հագեցնելու եւ ոչ թե որկրամոլությունը բավարարելու համար: Գինու օգտագործումը խստիվ արգելվում էր:

Ս. Բարսեղ Կեսարացին նշում է. «Սուրբ Հոգու շնորհները տրվում են ըստ հավատքի, եւ եղբայրներին եւս պետք է դրանց հաղորդակից դարձնել»[27], քանզի Տերն ասաց. «Զհիւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, զդեւս հանէք. ձրի առէք՝ եւ ձրի տուք»[28]. վանականները զբաղվում էին բարեգործությամբ, հիվանդների խնամքով, երեխաների կրթությամբ[29]: Իր աշխատություններում Ս. Բարսեղը մշտապես ընդգծում է. «Եթե որեւէ մեկը Տիրոջ վարդապետության մասին գիտի Սուրբ Գրքից կամ եկեղեցական հայրերի աշխատություններից, պետք է իր գիտեցածը հաղորդի նաեւ մյուսներին, հոգ տանի նրանց փրկության մասին»[30]: Նրա հիմնած վանական համալիրները կրթա-դաստիարակչական վիթխարի գործունեություն ծավալեցին: Գրեթե բոլոր վանքերին կից գործում էին հոգեւոր դպրոցներ, որտեղ կրթվում էին կարիքավոր ընտանիքների երեխաները, որբերն ու հաշմանդամները: Հաճախ ծնողներն էին իրենց կամքով երեխաներին վանականների դաստիարակությանը հանձնում: Հոգեւոր ծառայության ընթացքում Ս. Բարսեղ Կեսարացին ամեն կերպ փորձում էր օգնել ընչազուրկներին, հիվանդներին. որոշ տեղեկությունների համաձայն՝ նրա ջանքերով է Կեսարիայում բացվել առաջին հիվանդանոցը, որտեղ բուժօգնություն են ստացել բոլոր կարիքավորները: Նամակներից մեկում նա գրում է. «Ընդարմացել եմ ինձ շրջապատող բազում վշտերից, որոնք փառապալից են դարձնում իմ կյանքը...»[31]:

---

24 Մատթ. Ժ. 10:
25 Եփես. Դ. 27:
26 Տես **E. F. Morison**, *St. Basil and his rule: a study in early monasticism*, London, 1912, էջ 58-61:
27 Տես **Святой Василий Великий**, էջ 346-347:
28 Մատթ. Ժ. 8-9:
29 Տես "Христианство", т.1, Москва, 1993, էջ 340:
30 "Monks, Hermits and the Ascetic Tradition", ed. by W. J. Sheils, New York, 1985, p. 37.
31 **E. F. Morison**, p. 17-19.

Ս. Բարսեղ Կեսարացին քրիստոնեական բարոյական արժեքների պաշտպան էր եւ համառ պայքար է մղել հեթանոսական կենցաղավարությունից մնացած եւ կարծրացած սովորույթների եւ ավանդույթների դեմ: Այսպես, շատ քաղաքներում դեռեւս կիրառվում էր «paterfamilias»-ի սովորույթը, որը պահպանվել էր հիմնականում հռոմեացիների մոտ: Երեխային ծնվելուց հետո դնում էին գետնին, եւ ընտանիքը որոշում էր՝ պահե՞լ նրան, թե՞ ոչ: Եթե հայրը գետնից չէր բարձրացնում նորածնին, ուրեմն հրաժարվում էր նրանից: Հռոմեական բազմաթիվ քաղաքների ծայրամասերում կային հատուկ բարձունքներ կամ պատեր, որտեղից նորածիններին կա՛մ նետում էին, կա՛մ թողնում դրանց մոտ: Ս. Բարսեղը լսել էր այդ մասին, սակայն, երբ համոզվում է, որ այդ արատավոր սովորույթը դեռեւս կիրառվում է, շատ է վշտանում. գրում է բազմաթիվ քարոզներ, դատապարտում մանկասպանությունը՝ այն համարելով ծանրագույն մեղք եւ մեծագույն չարիք: Նա օգտագործում է իր կապերն ու հեղինակությունը, դիմում իշխանավորներին, պայքարում է այն հեքիմների եւ բժիշկների դեմ, որոնք օգնում էին մանկասպանություն գործելու, քարոզում, որ ոչ ոք իրավունք չունի Ստեղծող պարգեւած կյանքից մարդուն զրկելու: Պահպանված տեղեկությունները վկայում են, որ անգամ մի քանի սարկավագների հետ գնացել եւ սեփական ձեռքերով է քանդել հին կեսարական դամբարանը, որը մանկասպանության վայր է եղել[32]: Տեսնելով նրա համառ պայքարը՝ Վալենտիանոս կայսրը մանկասպանությունը քրեականացնելու ուղղությամբ քայլեր է ձեռնարկում եւ 354 թ. հրաման է արձակում՝ «Բոլոր ծնողները պարտավոր են մեծացնել իրենց ծնած երեխաներին. նրանք, որոնք սպանում կամ դեն են նետում նորածիններին, օրենքով սահմանված պատժին կարժանանան»[33]:

Ս. Բարսեղ Մեծը բարեփոխումներ է կատարել Եկեղեցու ծիսապաշտամունքային համակարգում: Այսպես՝ նրա հրահանգով Ս. Հարությանը նախորդող բոլոր օրերին հավատացյալները պետք է աղոթեին ուղիղ կանգնած՝ առանց խոնարհվելու եւ ծնկելու, որով պետք է արտահայտվեր նրանց ուրախությունը այդ սուրբ տոնի առիթով: Նա հետեւողական էր եւ պահանջում էր, որ ծիսապաշտամունքային արարողությունները պատշաճ կերպով անցկացվեն: Մեզ են հասել նրա ծիսական աշխատությունները՝ «Պատարագամատոյց»-ը, առավոտյան եւ երեկոյան ժամերգության կարգերը, աղոթքները, ինչպես նաեւ կանոնական, ծիսագիտական, դավանաբանական բնույթի նամակները[34]:

Ս. Բարսեղի աշխատությունները գրվել են արտաքին պատճառներով եւ նպատակներով, ուստի հիմնականում գործնական բնույթ ունեն: Նրա բարոյախրատական նամակները (թվով 80) ամբագրված են սուրբգրային հղումներով: Այս խմբի մեջ առանձնանում է Եւստաթեոս փիլիսոփային հասցեագրված նամակը, որը Ս. Բարսեղ Կեսարացին գրել է Աթենքում ուսումնառությունը ավարտելուց եւ նշանավոր անապատներ այցելելուց հետո: Նամակների մեծ մասի նպատակը քրիստոնեական բարոյագիտության կա-

32 Տե՛ս **George Grant**, *The Third Time Around: A History of the Pro-Life Movement from the First Century to the Present,* Brentwood, 1991, էջ 19-20:

33 Անդ, էջ 21:

34 Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», Երեւան, 2002, էջ 176:

պարեկագործումն ու ճգնակեցության պարածումն է: Այդ նամակները հասցեագրված են վանականներին, հոգեւորականությանը եւ հավատացյալ ժողովրդին: Քրիստոնյա համայնքի հովիվն իր նամակներով մխիթարում է անկյալներին, նրանց եփ կանչում Եկեղեցու գիրկը, նոր եւ աստվածահաճ կյանքի կոչում, իսկ եպիսկոպոսներին եւ հոգեւորականներին հորդորում է բարեխիղճ եւ բարեպաշտ լինել՝ մատնանշելով կատարելության հասնելու ճանապարհներ եւ միջոցներ: Այդ նամակները նաեւ պատմական մեծ արժեք ունեն, քանի որ դրանցից կարող ենք տեղեկություններ քաղել տվյալ ժամանակաշրջանի հոգեւոր, եկեղեցական, հասարակական, մշակութային կյանքի մասին:

Մ. Դոսնովն իրավացիորեն նկատում է. «Ս. Բարսեղ Մեծը գրեց ասկետիզմի (անապատականության) գաղափարախոսությունը եւ գծագրեց վանական կյանքի ողջ կառուցվածքը»[35]: Ս. Բարսեղ Կեսարացու՝ անապատական կյանքին վերաբերող կանոնների մասին տեղեկանում ենք նաեւ Գրիգոր Աստվածաբանին ուղղված համառոտ նամակներից[36]:

Ս. Բարսեղ Կեսարացու երկերը հայերեն են թարգմանվել Ե. դարից: Թարգմանվել են «Վեցօրեայք»-ը, «Պատարագամատոյց»-ը, կանոնները, աղոթքները: Բարսեղ Մեծի որոշ ճառեր եւ գործերից առանձին հատվածներ վկայաբերվել են Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» երկում, «Կնիք հաւատոյ» ժողովածուում: Միջնադարում հայ վանական կյանքի կազմակերպման համար արժեքավոր սկզբնաղբյուրներ են եղել «Գիրք հարցողաց»-ը[37] եւ «Պահոց» ճգնակեցական հրահանգների ժողովածուն[38]: Հայ հեղինակներն իրենց մեկնողական, դավանաբանական աշխատություններում անդրադարձել են Ս. Բարսեղ Կեսարացու գրվածքներին եւ դրանցից հատվածներ մեջբերել: ԺԲ-ԺԳ. դարերի հայ մատենագիր Վարդան Այգեկցին եւս ծանոթ է եղել «Պահոց գրքի» հայերեն թարգմանությանը, մասնավորապես, «Հարցմունք եւ պատասխանիք» երկից ընդարձակ քաղվածքներ է կատարել իր «Համառատ հաւաքումն սրբոց վարդապետաց» կամ «Արմատ հաւատոյ» աշխատությունը շարադրելիս[39]: Նույնպես եւ Հովհաննես Երզնկացին իր «Ի բան մարգարէին Դաւթի»[40] գրվածքի համար որպես սկզբնաղբյուր օգտագործել է «Գիրք հարցողաց»-ը:

---

35 Անդ, էջ 34:

36 Տե՛ս **Г. В. Флоровский**, նշվ. աշխ., էջ 108:

37 Տե՛ս **Բարսեղ Կեսարացի**, Գիրք հարցողաց, աշխատ.՝ Գաբրիելլա Ուլուհոջյանի, Լովեյն, 1993:

38 Տե՛ս **Ս. Բարսեղ Կեսարացի**, Գիրք պահոց, աշխատ.՝ Կիմ Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2008:

39 Տե՛ս **Վարդան Այգեկցի**, Արմատ հաւատոյ, Երեւան, 1998, էջ 35:

40 Տե՛ս **Ս. Բարսեղ Կեսարացի**, Գիրք պահոց, էջ 35: